

Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության ծրագիր

Ծրագիրը նպատակ ունի նպաստել տեղական արտադրանքի մրցունակության բարձրացմանը և ՓՄՁ սուբյեկտների կողմից գիտատեխնիկական արդյունքների արդյունավետ օգտագործմանն ու նրանց արտահանման ներուժի ընդլայնմանը:

Ծրագրի խնդիրներն են՝

- ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների նկատմամբ առկա պահանջարկի (ներդրման անհրաժեշտության), հիմնախնդիրների բացահայտումը,
- նորարարություններ և ժամանակակից տեխնոլոգիաներ առաջարկող կազմակերպությունների առաջարկի (ծրագրերի) ուսումնասիրությունը և ՓՄՁ սուբյեկտների մոտ դրանց ներդրմանն աջակցումը,
- ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացվող գործարար գաղափարների առևտրայնացման նպատակով տեխնիկական աջակցության ցուցաբերումը:

Ծրագրի իրականացման միջոցառումներն են.

- ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների, ժամանակակից տեխնոլոգիաների մշակմանն ու ներդրմանն աջակցող ՀՀ և արտերկրի կազմակերպությունների ու կառույցների հետ համագործակցության իրականացումը,
- միջազգային առաջատար փորձի, նորարարությունների, նոր տեխնոլոգիաների, արտադրատեսակների (ծրագրերի) վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և համակարգումը՝ գնահատելով դրանց կիրառման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը ԼՂՀ-ում,
- ՓՄՁ սուբյեկտներին միջազգային առաջատար փորձի, նորարարությունների, նոր տեխնոլոգիաների, արտադրատեսակների (ծրագրերի) մասին համակարգված տեղեկատվության տրամադրումը,
- ՓՄՁ սուբյեկտների (առավելապես՝ ԼՂՀ շրջաններում) տեխնիկական հագեցվածության, այդ թվում՝ համացանցով ապահովվածության մակարդակի ուսումնասիրումը և համակարգչային տեխնիկայի ներդրման և համացանցի միացման աշխատանքների իրականացումը, համակարգչային ծրագրերի տեղադրումը և դրանցից օգտվելու դասընթացների կազմակերպումը,
- ԼՂՀ, ՀՀ և արտերկրի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպությունների հետ գործնական կապերի հաստատումը, նրանց գործունեության, առաջարկվող արտադրանքների (ծրագրերի) ուսումնասիրումը,
- նորարարություններ ներդնելու, նոր արտադրատեսակ արտադրելու ցանկություն հայտնող ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացվող գործարար ծրագրերի հավաքագրումը, ուսումնասիրումը, դրանց

գնահատումը և լավագույն գնահատականի արժանացած իրատեսական նախաձեռնությունների իրագործմանն աջակցումը, նորարարությունների տեղեկատվական բազայի (գաղափարների բանկ) ստեղծումը և այլն:

Նախատեսված միջոցառումների իրականացմանը պայմանագրային հիմունքներով կարող են ընդգրկվել նաև տարբեր մասնագետներ ու մասնագիտացված կազմակերպություններ:

ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված Հայտերին ծրագրի փորձագետները կարող են պատասխանել բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային փոստի միջոցով: